ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի (զբաղմունքի անվանումը	0904 «Օգտագար հանածոների հարստացում» Հարստացնող
Դերը	**Հարստացման աշխատանքների ընթացքում հսկում և կարգավորում է տեխնոլոգիական գործընթացների ընթացքը, սարքավորումների վիճակին ու աշխատանքներին:**
Խնդիրների բնագավառ 1. Կարողանա ապահովել հարստացման նախապատրաստական աշխատանքների իրականացումը:	
Աշխատանքային գործընթացը	Հետևում և կարգավորում է հանքաքարի ընդունմանը զետեղարաններ, ջարդման, մաղման, տեղափոխման, աղացման և դասակարգման, փոշեզտիչ և օդափոխիչ սարքավորումների աշխատանքները, ինչպես նաև թողարկում և անջատում է սարքավորումները:
Կատարման չափանիշները	• Ջարդիչ սարքավորումների բեռնաթափման ճեղքերի անհրաժեշտ բացվածքը ապահովված է: • Ժապավենային փոխադրիչների անխափան աշխատանքը ապահովված է: • Մաղերի տեխնիկական վիճակը ստուգված է: • Աղացներում աղացող մարմիններով բեռնվածությունը և ապարախյուսի անրրաժեշտ խտությունը ապահովված է: • Դասակարգիչներում մզվածքի անհրաժեշտ խտությունը և հատիկաչա-փական կազմն ապահովված է:
Խնդիրների բնագավառ 2. Կարողանա ապահովել հարստացման հիմնական աշխատանքների իրականացումը:	
Աշխատանքային գործընթացը	Նախապատրաստում և նորմավորում է քիմիական ռեագենտները, հարստացման հիմնական աշխատանքներում ապահովում է ապարախյուսի անհրաժեշտ մակարդակը ֆլոտամեքենաներում, օդավորման անհրաժեշտ աստիճանը, գրավիտացիոն աշխատանքներում խտանյութի ելքն ու որակը, կատարում է պրոֆիլակտիկ աշխատանքներ՝ հեղյուսների ձգում, սարքերի յուղում:
Կատարման չափանիշները	• Ռեագենտային լուծույթները նախապատրաստված և նորմավորված են: • Ֆլոտամեքենաներում ապարախյուսի մակարդակը պահպանված է: • Ֆլոտամեքենաներում ապարախյուսի օդավորման աստիճանը ապահովված է: • Գրավիտացիոն աշխատանքներում խտանյութի ելքն ու որակը ապահովված է:
Խնդիրների բնագավառ 3. Կարողանա ապահովել հարստացման օժանդակ աշխատանքների իրականացումը:	
Աշխատանքային գործընթացը	Կատարում է խտանյութի ջրազրկումը խտացուցիչներում, քամիչներում և չորանոցներում:
Կատարման չափանիշները	• Խտացուցիչի մզվածքի անհրաժեշտ պարզությունն ապահովված է: • Նստվածքի խտությունը խտաացուցիչում ապահովված է: • Քամիչի մզվածքի մաքրությունն ապահովված է: • Քամվածքում խոնավությունը ապահովված է: • Չորացված արտադրանքի խոնավությունը ապահովված է:
Պատասխանատվությունը և բարդության աստիճանը	

Բարդության աստիճանը	Պարզ և միջին բարդության
Պատասխանա-տվությունը	Կատարված աշխատանքը պետք է համապատասխանի տեխնոլոգիական պահանջներին
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Լեզուները	• Հայերեն, • օտար լեզվի մասնակի իմացություն, շփվելու և մասնագիտական գրականությունից օգտվելու համար:
Համակարգիչը	• Օգտակար հանածոների հարստացմանը վերաբերող համակարգչային ծրագրրով աշխատելու համար:
Գիտելիքը	• Հարստացվող հանքաքարի ֆիզիկամեխանիկական հատկությունների տարական գիտելիքների իմացություն: • Հարստացման համար կիրառվող սարքերի և սարքավորումների աշխատանքային սկզբունքների իմացություն: • Ջարդման և մաղման աշխատանքների հիմունքների իմացություն: • Մանրացման և դասակարգման աշխատանքների հիմունքների իմացություն: • Գրավիտացիոն և ֆլոտացիոն աշխատանքների հիմունքների իմացություն: • Խտացման, քամման և չորացման աշխատանքների իմացություն: • Հանքահարստացման ոլորտում օգտագործվող քիմիական ռեագենտների և դրանց միացությունների մասին գիտելիքներ: • Մաթեմատիկական ոչ բարդ հաշվարկներ կատարելու իմացություն: • Աշխատանքի անվտանգության և քիմիական ռեագենտներով աշխատելու անվտանգության ընդհանուր կանոնների իմացություն: • Շրջակա միջավայրը չախտոտելու իմացություն:
Կարողությունները, հմտությունները և վերաբերմունքը	• Տեխնոլոգիական քարտեր կարդալու և օգտվելու կարողություն: • Աշխատանքային անվտանգության և առողջության պահպանման նորմատիվ պահանջների իմացություն: • Հարստացման մեջ օգտագործվող սարքվորումները գործարկելու և մանր նորոգումներ կատարելու ունակություն: • Քիմիական ռեագենտներով աշխատելու կարողություն: • Ջարդիչների բեռնաթափման անցքերի կարգավորման հմտություն: • Աղացներում ապարախյուսի պահանջվող խտության ապահովման և կարգավորման կարողություն: • Դասակարգիչներում ապարախյուսի պահանջվող խտության ապահովման և կարգավորման կարողություն: • Գրավիտացիոն սարքավորումներում խտանյութի ելքի և որակի ապահովման կարողություն: • Ֆլոտամեքենաներում ապարախյուսի մակարդակի և օդավորման աստիճանի ապահովման և կարգավորման կարողություն: • Ջրազրկման սարքավորումներում մզվածքի պարզության աստիճանը պահպանելու հմտություն: • Սեփական մտահաղացումները առաջարկելու կարողություն: • Հանձնարարականները ժամանակին և որակով կատարելու

	պատրաստակամություն, հանձնարարականները ճշգրտելու կարողություն։ • Անհատական և խմբային աշխատանք կատարելու կարողություն։ • Մարդկանց հետ շփվելու կարողություն։

ՀԱՎԵԼՎԱԾ 2

0904 «ՕԳՏԱԳԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՀԱՐՍՏԱՑՆՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

«Հարստացնող» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

Պետական կրթական (որակավորման) չափորոշի բոլոր մոդուլների համապատասխան ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է համալիր թեսթային հարցման միջոցով։ Թեսթը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող՝ ընդհանուր թվով 40 հարցից։

Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեսթային առաջադրանքի հարցերի առնվազն 95%-ին։